# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Եղեգնաձոր** **14-ը հունիս 2024**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Նեկտար Հովհաննիսյանը, Կարեն Մանասերյանը, Թամարա Մկրտչյանը, Գրիգոր Սարգսյանը, Ծովինար Սարգսյանը, Արմեն Վարդանյանը և Ռոմիկ Վարդանյանը:

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետներ Քրիստինե Պողոսյանը և Անի Հասրաթյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 14-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 134-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 136-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

8) Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և 296.1 քմ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

9) Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և 709.8 քմ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

10) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

11) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 54-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

12) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

13) Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

14) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեում վերաբաշխում կատարեու մասին:

15) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին.

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի,

2) Մալիշկա բնակավայրի բնակիչ Վահիկ Ստեփանյանի ընտանիքին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես աջակցություն որդու բուժման ծախսերի,

3) Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Արման Սիմոնյանին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես աջակցություն բուժման ծախսերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 134-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «2024 թվականի համար Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 134-Ա որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «2024 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 136-Ա որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, համաձայն որի՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Եղեգնաձոր համայնքին նվիրատվության թիվ ՆՏ-09-24 պայմանագրով հանձնված՝ ընդհանուր 5 573 000 (հինգ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ արժողությամբ թվով 5 հատ էլեկտրական ցանկապատ համակարգերը ընդգրկվել են համայնքի գույքացուցակում:

2. Սույն որոշման առաջին կետում նշված էլեկտրական ցանկապատ համակարգերը օգտագործել նպատակային՝ համաձայն նվիրատվության թիվ ՆՏ-09-24 պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին.
***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին.
***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի

պահանջները և այն հանգամանքը, որ նշված հողատեսքը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 1.61014 հա մակերեսով արոտավայր հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0220-0022) խոտհարք հողատեսքի փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին.

***ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 296.1 ՔՄ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 9-ի N 4 որոշման քաղվածքը, 2024 թվականի ապրիլի 22-ի թիվ 1217, 1246 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, առաջին պետական գրանցման հանգամանքը և Զավեն Արմենի Հարությունյանի լիազորված անձ՝ Նարգիզ Սամվելի Հարությունյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Ճանաչել քաղաքացի՝ Զավեն Արմենի Հարությունյանի (ծնված՝ 1983թ.) սեփականության իրավունքը Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի 16-րդ փողոց, 13/1 հասցեում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 931.8 քմ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Սեփականաշնորհման չափի 20 տոկոսից ավել օգտագործվող 296.1 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Զավեն Արմենի Հարությունյանին:

3. 296.1 քմ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 70 360 (յոթանասուն հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 30 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին.

***ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 709.8 ՔՄ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի փետրվարի 1-ի N 2 որոշման քաղվածքը, առաջին պետական գրանցման հանգամանքը և քաղաքացի Վահագ Հրաչիկի Ասատրյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Ճանաչել քաղաքացիներ՝ Վահագ Հրաչիկի Ասատրյանի (ծնված՝ 1950թ.), Հասմիկ Ժորժիկի Մինասյանի (ծնված՝ 1955թ.), Հրանտ Վահագի Ասատրյանի (ծնված՝ 1977թ.), Նազելի Վահագի Ասատրյանի (ծնված՝ 1975թ.), Նարինե Վահագի Ասատրյանի (ծնված՝ 1986թ.) համատեղ սեփականության իրավունքը Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի 15-րդ փողոց, 10 հասցեում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 1049.8 քմ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Սեփականաշնորհման չափի 20 տոկոսից ավել օգտագործվող 709.8 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Վահագ Հրաչիկի Ասատրյանին:

3. 709.8.1 քմ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 109 630 (մեկ հարյուր ինը հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 30 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին.

***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաաստանի Հանրապետության էկոնոմիայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1667-Ն հրամանով հաստատված հավելվածի՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկի 11.02 կետը և քաղաքացի Արա Վարդանյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Արա Մարլենի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 1.172 հա խաղող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքներիի պետական գրանցման վկայական N 10052024-10-0018, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0331-0021) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածք՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն հիմնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայսատանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի՝ «Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» թիվ 54-Ա որոշման՝

1) 1-ին կետում «2.26854» թիվը փոխարինել «2.56854» թվով,

2) 2-րդ կետը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ.

«2. Սույն որոշման առաջին կետում նշված անշարժ գույքերի վարձակալության համար տարեկան վարձավճար սահմանել 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ: Վարձավճարը գանձել մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՄՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ սահմանված կարգի 8-րդ գլխի 44-րդ կետի է) ենթակետը և Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի կողմից տրված եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի վարչական տարածքում գտնվող 4.30105 հա ընդհանուր մակերեսից 1.73251 հա գյուղատնտեսական նշանակությամբ այլ հողատեսքը (հասցե՝ ք. Եղեգնաձոր 5 հողամաս, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 27052024-10-0003) և 1.73576 հա ընդհանուր մակերեսից 0.0258 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (հասցե՝ ք. Եղեգնաձոր 7 հողամաս, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 19042024-10-0029) 18 (տասնութ) տարի ժամկետով, առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրել «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ին:

2. Սույն որոշման առաջին կետում նշված անշարժ գույքերի վարձակալության համար տարեկան վարձավճար սահմանել 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի հետ կնքել անշարժ գույքերի վարձակալության պայմանագրեր:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը թողնել «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին.
***ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության կողմից ներկայացված N 1089/24-1 գրությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Երևանյան խճուղի 4-րդ նրբանցք, 10/1 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0159-0046), 0.02 հա մակերեսով և Գետափ բնակավայրի 25-րդ փողոց 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող 0.01871 հա մակերեսով բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0034-0037) հողամասերի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը՝ կապի, փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2024 թվականի սեպտեմբերի 20-ը, ժամը՝ 18:00-ն, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՂԻՇԵ ՆԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՄԱՐԱՏ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը